«ՍՄԱՐԹ ՕԹԻԹի (OTT) ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «**Սմարթ ՕԹԻԹի (OTT) հեռուստատեսություն**» ծառայությունը հնարավորություն է ընձեռում օգտվել հեռուստատեսության ծառայություններից ՀՀ տարածքում, ինչի համար անհրաժեշտ է SmartBox սարքավորում և լայնաշերտ ինտերնետ հասանելիություն (ցանկացած Ինտերնետ մատակարարի)՝ նվազագույնը 2.5 Մբ/վ արագությամբ:
2. «**Սմարթ ՕԹԻԹի (OTT) հեռուստատեսություն**» ծառայության սկզբնական ակտիվացման համար անհրաժեշտ է նվազագույնը 1000 դրամ մնացորդի առկայություն բաժանորդի հաշվին:
3. SmartBox սարքավորման մոդելն է՝ ZTE B760H:

4. «ՍՄԱՐԹ ՕԹԻԹի (OTT) ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ, ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՋԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. **«Սմարթ ՕԹԻԹի (OTT)»** սակագնային փաթեթի դիմաց վճարման կարգը կանխավճարային է և հաշվարկվում է ըստ ծառայության մատուցման ամսվա օրերի քանակի:

4.2. Հիմնական և հավելյալ ծառայությունների ակտիվացման համար անհրաժեշտ նախապայման է դրանց օրական բաժանորդային վճարին (այսուհետ՝ Օրական բաժանորդային վճար) համարժեք կամ այն գերազանցող դրական հաշվեկշռի առկայությունը:
Օրական բաժանորդային վճար է համարվում սակագնային փաթեթով սահմանված Հիմնական ծառայությունների, ինչպես նաև ձեռք բերված հավելյալ պարբերական ծառայությունների (այսուհետ՝ Պարբերական ծառայություն) ամսավճարների հանրագումարի և ծառայության մատուցման ամսվա օրերի քանակության հարաբերությունը:

4.3. Բաժանորդի ընթացիկ հաշվի դրական հաշվեկշռին առնվազն օրական բաժանորդային վճարի չափով մնացորդի առկայության դեպքում բաժանորդի հաշվից գանձվում է Օրական բաժանորդային վճարը, ինչին անմիջապես հաջորդում է սակագնային փաթեթով սահմանված ծառայությունների ակտիվացումը:
Օրական բաժանորդային վճարը գանձվում է ծառայության ակտիվացման պահից մինչև ընթացիկ օրվա ավարտը մատուցվող ծառայությունների դիմաց (բացառությամբ սակագնային փաթեթի փոփոխության իրականացման դեպքում (կետ 6)): Սույն կետում նշված կարգով ծառայությունների ակտիվացման պահը(ժամը) չի անդրադառնում հաշվեգրվող օրական բաժանորդային վճարի չափի հաշվարկի վրա:

4.4. Եթե ընթացիկ օրվա ավարտին բաժանորդի դրական հաշվեկշիռը պակաս է օրական բաժանորդային վճարի չափից, ապա ակտիվացված հիմնական և Պարբերական ծառայությունները կասեցվում են միասնական կարգով:

4.5. Ծառայությունների վերաակտիվացման համար անհրաժեշտ նախապայման է առնվազն Օրական բաժանորդային վճարի չափով դրական հաշվեկշռի առկայությունը:

4.6. Եթե ընթացիկ օրվա ավարտին բաժանորդի դրական հաշվեկշիռը առնվազն օրական բաժանորդային վճարի չափ է, ապա նույն պահին բաժանորդի հաշվից գանձվում է օրական բաժանորդային վճարի չափով գումար տվյալ պահից մինչև հաջորդ օրվա ավարտը մատուցվող ծառայությունների դիմաց և ծառայությունների մատուցումը չի կասեցվում:

4.7. Հավելյալ Պարբերական ծառայությունների ակտիվացման համար անհրաժեշտ նախապայման է Հիմնական ծառայության ակտիվ լինելը և հավելյալ պարբերական ծառայությունների օրական վճարին (հավելյալ պարբերական ծառայության օրական վճար է համարվում հավելյալ ծառայության ամսավճարի և ծառայության մատուցման ամսվա օրերի քանակության հարաբերությունը) համարժեք կամ այն գերազանցող դրական հաշվեկշռի առկայությունը:

4.8. Միանվագ ծառայությունների ակտիվացման համար անհրաժեշտ նախապայման է Միանվագ ծառայությունների վճարին համարժեք կամ այն գերազանցող դրական հաշվեկշռի առկայությունը:

5. «ՍՄԱՐԹ ՕԹԻԹԻ (OTT) ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Սմարթ ՕԹԻԹԻ (OTT) Հեռուստատեսություն» ծառայության հավելյալ ծառայությունները տրամադրվում են ի լրումն սակագնային փաթեթների պայմաններով սահմանված հիմնական ծառայությունների:

Հավելյալ ծառայություններին հնարավոր է միանալ՝ վճարելով սահմանված միանվագ վճարը կամ հավելյալ պարբերական ծառայության օրական վճարը:

5.1. Առանձին հեռուստաալիքների ընտրություն

«**Սմարթ ՕԹԻԹԻ (OTT) հեռուստատեսություն»** ծառայության Բաժանորդը կարող է միանալ առանձին հեռուստաալիքներին:

Ակտիվացված յուրաքանչյուր առանձին հեռուստաալիքի համար սահմանված ամսավճարը գումարվում է տվյալ սակագնային փաթեթի ամսավճարին: Հնարավոր չէ ակտիվացնել որևէ առանձին հեռուստաալիք, որն արդեն ներառված է Բաժանորդի սակագնային փաթեթում: Հաշվետու ամսվա առաջին օրվանից սկսած մինչև նույն ամսվա վերջին օրը ներառյալ ժամանակահատվածում բաժանորդը կարող է ապաակտիվացնել ակտիվացված առանձին հեռուստաալիքներից առավելագույնը 10 անգամ՝ անկախ նրանից՝ յուրաքանչյուր անգամ ապաակտիվացվում են տարբեր հեռուստաալիքներ, թե միևնույն հեռուստաալիքը՝ բազմակի անգամ: Եթե բաժանորդը կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն, ապա նոր սակագնային փաթեթի շրջանակներում չի ստանում առանձին հեռուստաալիքները ընթացիկ ամսվա ընթացքում ևս 10 անգամ ապաակտիվացնելու հնարավորություն, այլ շարունակում է գործել նախորդ սակագնային փաթեթի շրջանակներում հեռուստաալիքների ապաակտիվացման հնարավոր առավելագույն քանակը:

Առանձին հեռուստաալիքների ծառայությունը հանդիսանում է Պարբերական ծառայություն:

5.2. Ֆիլմադարան (VOD)

«Ֆիլմադարան» ծառայության միջոցով Բաժանորդը ստանում է Օպերատորի ֆիլմադարանից ֆիլմերի ընտրության և ֆիլմի ձեռքբերման պահից սկսած 48 ժամվա ընթացքում ընտրված ֆիլմը դիտելու հնարավորություն: Սույն կետում նշված ժամանակահատվածում Բաժանորդը կարող է դիտել ձեռք բերված ֆիլմը առանց քանակության սահմանափակման: Յուրաքանչյուր ձեռք բերված ֆիլմի համար գանձվում է սահմանված միանվագ վճար:

«Ֆիլմադարան» ծառայությունը հանդիսանում է միանվագ ծառայություն:

5.3. Ֆիլմերի փաթեթներ (SVOD)

«Սմարթ ՕԹԻԹԻ (OTT) հեռուստատեսություն» ծառայության Բաժանորդը հնարավորություն ունի ձեռք բերել ֆիլմերի փաթեթներ: Ֆիլմերի փաթեթների համար սահմանված է միանվագ վճար: Ստորև ներկայացված են ֆիլմերի 5 փաթեթները՝

1. 5 դիտում – տրամադրվում է 5 ֆիլմ դիտելու հնարավորություն՝ 1000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) միանվագ վճարով,
2. 10 դիտում – տրամադրվում է 10 ֆիլմ դիտելու հնարավորություն՝ 1500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) միանվագ վճարով,
3. 20 դիտում – տրամադրվում է 20 ֆիլմ դիտելու հնարավորություն՝ 2500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) միանվագ վճարով:
4. 100 դիտում – տրամադրվում է 100 ֆիլմ դիտելու հնարավորություն՝ 10000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) միանվագ վճարով:
5. «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթ - տրամադրվում է 100,000 սերիա դիտելու հնարավորություն՝ 10,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) միանվագ վճարով:

Ձեռք բերելով ֆիլմերի փաթեթ՝ Բաժանորդը ստանում է տվյալ փաթեթի պայմաններով սահմանված քանակով իր ընտրությամբ Օպերատորի կողմից տրամադրվող ֆիլմերի ցանկից ֆիլմեր դիտելու հնարավորություն փաթեթի ձեռք բերման պահից սկսած 30 օրվա ընթացքում «5 դիտում», «10 դիտում» և

«20 դիտում» Ֆիլմերի փաթեթների համար և փաթեթի ձեռք բերման պահից սկսած 365 օրվա ընթացքում՝ «100 դիտում» Ֆիլմերի փաթեթի և «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթի համար (այսուհետ՝ Դիտման առավելագույն ժամանակահատված): Եթե Բաժանորդը Դիտման առավելագույն ժամանակահատվածում չի դիտում ֆիլմ տվյալ փաթեթով սահմանված առավելագույն քանակով, ապա նա հետագայում կորցնում է տվյալ փաթեթի շրջանակներում տրամադրված և չդիտված ֆիլմերը դիտելու հնարավորությունը: Ֆիլմերի փաթեթում ներառված ֆիլմերի քանակը սահմանափակվում է փաթեթով սահմանված քանակով ֆիլմերի դիտմամբ: Ֆիլմերի փաթեթի շրջանակներում միևնույն ֆիլմը առաջին միացնելու պահից սկսած 2 (երկու) ժամվա ընթացքում հնարավոր է դիտել բազմակի անգամ, որը համարվում է մեկ դիտում: Միևնույն ֆիլմի՝ առաջին միացնելու պահից սկսած 2 (երկու) ժամից հետո յուրաքանչյուր դիտումը համարվում է առանձին դիտում և հավասարազոր է միևնույն քանակով տարբեր ֆիլմեր դիտելուն: Եթե Բաժանորդը ակտիվացրել է որևէ Ֆիլմերի փաթեթ, ապա տվյալ փաթեթի ակտիվ ժամանակահատվածում հնարավոր չէ ակտիվացնել մեկ այլ Ֆիլմերի փաթեթ կամ գնել ֆիլմ «Ֆիլմադարան» ծառայության միջոցով: Ֆիլմերի փաթեթի ակտիվ ժամանակահատված է համարվում տվյալ փաթեթով սահմանված Դիտման առավելագույն ժամանակահատվածը կամ տվյալ փաթեթի ակտիվացման պահից սկսած մինչև տվյալ փաթեթով սահմանված առավելագույն քանակով ֆիլմերի դիտումը, եթե դա կատարվում է մինչև տվյալ փաթեթով սահմանված Դիտման առավելագույն ժամանակահատվածի ավարտը: Ֆիլմերի փաթեթի ակտիվ ժամանակահատվածի ավարտից հետո հնարավոր է կրկին ձեռք բերել Ֆիլմերի փաթեթ կամ գնել ֆիլմ «Ֆիլմադարան» ծառայության միջոցով:

5.4. Եթերի տեսագրում (NPVR)

«Եթերի տեսագրում» ծառայության միջոցով հնարավոր է տեսագրել հետագայում հեռարձակվող հաղորդումները: Ակտիվացնելով «Եթերի տեսագրում» (NPVR) ծառայությունը՝ «Սմարթ OTT Հեռուստատեսություն» ծառայության բաժանորդը ստանում է վիրտուալ տարածք մինչև 3 (երեք) ժամ տևողությամբ եթերի տեսագրություն իրականացնելու հնարավորությամբ՝ վճարելով 1000 դրամ (ներառյալ ԱԱՀ) ամսավճար:

«Եթերի տեսագրում» ծառայությունը հանդիսանում է Պարբերական ծառայություն:

5.5. Նախկին հաղորդումներ (TV on Demand)

«Նախկին հաղորդումներ» ծառայության միջոցով Բաժանորդը կարող է դիտել ցանկացած հաղորդում՝ հաղորդման սկզբից, վերջինիս եթեր դուրս գալուց հետո որոշակի ժամանակահատվածում: Նշված ժամանակահատվածը սահմանվում է սակագնային փաթեթի պայմաններով: Սույն ծառայության միջոցով հնարավոր է նախկին հաղորդումները դիտել՝ ըստ հաղորդումների ցանկի:

«Նախկին հաղորդումներ» ծառայությունը մատուցվում է առանց վճարի գանձման:

5.6. Եթերի կառավարում (TSTV)

«Եթերի կառավարում» ծառայության միջոցով հնարավոր է դադարեցնել տվյալ պահին ցուցադրվող հաղորդման դիտումը և այն շարունակել դիտել հետո, ինչպես նաև դիտել սկզբից: Եթերի կառավարում ծառայության միջոցով հնարավոր է նաև դիտել նախկին 3 ժամվա ընթացքում հեռարձակված եթերը՝ ըստ ռոպեների:

«**Եթերի կառավարում**» ծառայությունը մատուցվում է առանց վճարի գանձման:

5.7. Ժամանակավոր կասեցում

«Սմարթ ՕԹԻԹի (OTT)» սակագնային փաթեթի յուրաքանչյուր Բաժանորդ կարող է Ծառայությունների մատուցումը ժամանակավոր կասեցնելու վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնել Օպերատորին նախատեսված կասեցման օրվանից առնվազն 1 օր առաջ՝ նշելով Ծառայությունների մատուցումը կասեցնելու կոնկրետ ժամանակահատվածը: Կասեցված ժամանակահատվածների գումարային տևողությունը չպետք է գերազանցի 60 օրը: Կասեցված ժամանակահատվածի համար օրական բաժանորդային վճար չի հաշվարկվում: Ժամանակավոր կասեցման ծառայության ակտիվացումը կատարվում է առանց վճարի գանձման:

5.8. Հաշվի վերծանում

«Սմարթ ՕԹիԹի (OTT) Հեռուստատեսություն» ծառայության յուրաքանչյուր Բաժանորդ կարող է ստանալ հաշվի վերծանում, որն իրենից ներկայացնում է առավելագույնը վերջին 12 ամիսների (365 օրերի) ընթացքում իր սակագնային փաթեթի մեջ ներառված ծառայությունների և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի մասին մանրամասն տեղեկատվություն: Հաշվի վերծանում ծառայության դիմաց Բաժանորդը վճարում է 200 դրամ՝ ներառյալ ԱԱՀ միանվագ վճար՝ անկախ տրամադրվող հաշվի վերծանման ժամանակահատվածից: Յուրաքանչյուր Բաժանորդ, անկախ տվյալ պահին իր հաշվի կարգավիճակից, կարող է օգտվել Հաշվի վերծանում ծառայությունից: Օպերատորը պարտավոր է Բաժանորդին տրամադրել հաշվի վերծանում մինչև նախորդ 12 ամսիների (365 օրերի) ընթացքում մատուցված ծառայությունների համար, Բաժանորդի կողմից ընտրված ժամանակահատվածի չափով:

5.9. Սակագնային փաթեթի փոփոխություն

ա) Հնարավոր է իրականացնել «Սմարթ ՕԹիԹի (OTT) Պրեմիում» սակագնային փաթեթիփոփոխություն՝ անցում կատարելով «Սմարթ ՕԹիԹի (OTT) Ստարտ» սակագնային փաթեթին: Այլ սակագնային փաթեթներից հնարավոր չէ անցում կատարել «Սմարթ ՕԹիԹի (OTT) Պրեմիում» սակագնային փաթեթին:

բ) Սակագնային փաթեթի յուրաքանչյուր փոփոխության պահին բաժանորդային հաշվից գանձվում է նոր սակագնային փաթեթով սահմանված Հիմնական ծառայությունների օրական վճարը (Հիմնական ծառայությունների օրական վճարը Հիմնական ծառայությունների ամսավճարի և ընթացիկ ամսվա օրերի քանակության հարաբերությունն է):

գ) Չի թույլատրվում իրականացնել սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով այլ ծառայությունների սակագնային փաթեթներին:

5.10. Անվանափոխություն

Անվանափոխության ծառայությունից հնարավոր է օգտվել առանց ժամկետային և քանակական սահմանափակումների: Անվանափոխության ծառայությունը մատուցվում է առանց վճարի գանձման: Պայմանագրի անվանափոխության դեպքում գործող Բաժանորդի հաշվեկշիռը փոխանցվում է նոր Բաժանորդին:

6. Այլ պայմաններ

ZTE B760H սարքավորումը սեփականության իրավունքով ձեռքբերման դեպքում, եթե Ծառայություններն անընդմեջ կասեցված են 120 օրերի ընթացքում (կասեցում է համարվում սույն պայմաններով սահմանված ժամանակավոր կասեցումը, ոչ բավարար հաշվեկշռի առկայության հետևանքով իրականացված կասեցումը կամ Օպերատորի կողմից սահմանված կարգով ցանկացած այլ հիմքով իրականացված կասեցումը), ապա Օպերատորն իրավունք ունի՝ առանց Բաժանորդին նախօրոք ծանուցման, միակողմանիորեն լուծել Բաժանորդի հետ կնքված Բաժանորդային պայմանագիրը:

ZTE B760H սարքավորումը Օպերատորի կողմից օգտագործման իրավունքով Բաժանորդին տրամադրելու դեպքում, եթե հաշվետու ամսվա ընթացքում Բաժանորդի մոտ Ծառայություններն ակտիվ են ավելի քիչ քան քսան օր և վերջինս կրկնվում է առնվազն 2 հաջորդական ամսվա ընթացքում, ապա Օպերատորն իրավունք ունի առանց Բաժանորդին նախօրոք ծանուցման, միակողմանիորեն լուծել Բաժանորդի հետ կնքված Բաժանորդային պայմանագիրը և ետ պահանջել տրամադրված սարքը կամ սարքին համարժեք գումարը: